■ Թիֆլիսից հեռագրում են «Баку» լրագրին, որ բանտարկուած հայ գրագէտներից ոմանց արձակել են 10—15000 ռուբլի գրաւականով։

■ Ն. Նախիջևանից մեզ հաղորդում են, որ ս. Էջմիածնի ճեմարանի տեսուչ ձերբակալուած Մինաս Բերբերեանի հայրը հեռագրով խնդրել է նախարարապետ Ստալիպինին, որ ի նկատի ունենալով իւր որդու վատառողջ դրութիւնը՝ նորան յանձնեն իւր խնամքին և երաշխաւորութեան մինչև քննութեան աւարտումը։ Հեռագիրն ուղարկուած է քննչի տնօրինութեան։

■ Մուրացանի երկերը տպագրութեան համար կազմուած մասնաժողովը լուծուեց։

■ Կ. Պօլսի ազգային ժողովը Տ. Եղիշէ եպիսկոպոս Դուրեանին ընտրեց պատրիարք Թիւրքիոյ հայոց։

■ Կ. Պօլսում դադարեցրել են «Բիւզանդիոն» լրագիրը և նորա խմբագիր յայտնի Բիւզանդ Քէչեանին ձերբակալել։

■ «Լուսաբեր»-ի հեղինակները պատրաստել են և մամուլին յանձնել III և IV տարիների դասագրերը, որով ամբողջանում է հայոց լեզուի տարրական շրջանը։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Տարեկան հաշիւ վասն 1907 ամի ազգային-կրօնական, բարեգործական և կրթական (1907-1908) հաստատութեանց Նոր Ջուղայի 3 դպ. գիւղօրէից և եկեղեցեաց Թեհրանի և Թաւրիզի (1906—1907)

Атпетъ, Мамедъ-Али Шахъ. Современная Персія. 1909 г. Александрополь. Цѣна одинъ руб.

Երուանդ վարդ. Տէր Մինասեանց. Յիսուսի կեանքն ու գործունէութիւնը. Համառօտութիւն պ. Վ. Շմիտի և Ո. Օտտօի երկերից. Ս. Էջմիածին գինը 30 կոպ.

Եղիշէ Ա. Ք. Գնդամեանց. Պատմական քաղուածներ. Ա. պրակ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան. Բագու գինն է 30 կ. պրակ Բ. Դաւիթ-Դանիէլ կաթողիկոսներ Բագու գինը 30 կ.

Էմմանուէլ ք. Նազարեան. Խաչեր, Ալէքսանդրապօլ գինը 40 կոպ.

Տեղեկագիր Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի 1906—1908 թ.

Տեղեկագիր և հաշիւ Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան 1908 թ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Կ. Պօլիս Մ. ա. ե. վերջին օրը ստացանք ձեր յօդուածները, որոնք մնացին հետևեալ համարին։

Ն. Բայազիտ. Խանզադէին. ձեր վէպը նորից սկսեցինք տպել, ի նկատի ունենալով մեր նոր բաժանորդներին։

Բագու Սև քաղաք. պ. Մկրտումեանցին. ուելորդ համարը սխալմամբ է ուղարկուած ձեզ։

Խմբագիր—Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ